

# ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

*Բաց են թողնված Չարենցի ծննդավայրն ու սիրած աղջկա անուն-ազգանունը: Վերականգնի՛ր:*

Թողած ...................., գետի ափին, տունս՝ շինված անտաշ քարով,
........................ թողած, .................... այգին ու հայրենի երկինքը մով,
Եվ ................... ...................................... անգամ չասած մնաս բարով,
Անց եմ կենում հիմա օտար քաղաքների ճանապարհով:

*Ընտրի՛ր՝ ո՞րն է Չարենցի իսկական ազգանունը:*

**ա/** Դանիելյան
**բ/** Սարիբեկյան
**գ/** Սողոմոնյան

*Ընտրիր՝ ո՞ր տարբերակն է ճիշտ:*

**ա/** Չարենցը մահացել է խոր ծերության հասած:
**բ/** Չարենցը մահացել է ավտովթարից:
**գ/** Չարենցին ձերբակալել են 1937 թ., և նա մահացել է բանտում:

*Լրացրո՛ւ քառատողի բաց թողած բառերը:*

Ուրիշ .................................. կգա կմտնի բաղը,
Ուրիշ ........................... կասե աշխարհի խաղը,
Ինչ որ ես չեմ ասե - ........................ կասե վաղը,
Օրերը ................. կըլին, ......................... կմնա:

**(տարի, նա, բլբուլ, ծուխ, աշուղ)**

*Ընտրի՛ր Չարենցի բանաստեղծության տողի ճիշտ շարունակությունը:*

**Էլի գարուն կգա ...**

**ա/** կավարտվի ձմեռը

**բ/** կբացվի վարդը

**գ/** կերգի սոխակը

*Շրջաններում համարակալի՛ր ճիշտ հերթականությամբ:*

◯ Գոզալը լաց կըլի, կընկնի արցունքը-
◯ Ուրիշ սրտի համար կիալվի խունկը,
◯ Գերեզմանիս մարմար քարին կմնա,
◯ Կբացվի շուշանը, վարդեր

*Տեղադրի՛ր բաց թողած բառերը:*

Ուր էլ լինեմ – չեմ մոռանա ես .................. երգերը մեր,
Չեմ մոռանա ......... դարձած, երկաթագիր գրքերը մեր,
Ինչքան էլ սուր ........... խոցեն ................ վերքերը մեր,
Էլի ես ....... ու ............ իմ Հայաստան – յարն եմ սիրում:

*Գրի՛ր բաց թողած բառերը համապատասխան տեղերում:*

Ես իմ ............... Հայաստանի .......................... բառն եմ սիրում,
Մեր հին սազի ողբանվագ, ............................. լարն եմ սիրում:

**(լացակումած, անուշ, արևահամ)**

# ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ



Դեմիրճյանը ծնվել է …………… թ. Ախալքալաքում: Սովորել է էջմիածնի ………………….. ճեմարանում, Թիֆլիսի ……………….. դպրոցում և Շվեյցարիայում: Թիֆլիսում աշխատել է որպես ……………………….: Եղել է Թումանյանի կազմակերպած «…………………………..» գրական ընկերության անդամ: Գրել է «…………………………..» պատմվածքը:

***Թվարկի՛ր Հաճի աղայի ընտանիքի անդամներին:***

______________________________________________

______________________________________________

***Շրջաններում նախադասությունները համարակալի՛ր դեպքերի ճիշտ հաջորդականությամբ:***

◯ ***ա/*** Անհանգիստ էր վերին աստիճանի: Արդեն մի շաբաթ էր՝ ականջին դիպել էր, որ թուրքը գալիս է:

◯ ***բ/*** Մի շաբաթ անց Հաճի աղան պառկեց անկողնում: Երկու ժամում մրսել էր: Քրտնեցրին, ֆելդշեր բերել տվին: Ոչինչ օգուտ չեղավ:

◯ ***գ/*** Քաղաքը տեղից վեր կացել, գնում էր: Ֆուրգոններ, սահնակներ աղմկելով գնում էին: Քաղաքի կողմը լսվում էին թնդանոթի խուլ դղրդյուններ:

*Ո՞ր էր Սրբունը Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքում:*

***ա/*** Հաճի աղայի կինը

***բ/*** Հաճի աղայի քույրը

***գ/*** Հաճի աղայի մայրը

*«Ավելորդը» պատմվածքում ո՞վ էր ավելորդ:*

***ա/*** Սրբունը

***բ/*** Հաճի աղան

***գ/*** Հաճի մարը

*Թվարկված բառերից որո՞նք են բնորոշ Սրբունին: Ընդգծի՛ր:*

բարի, չար, շատախոս, քչախոս, աշխույժ, անդամալույծ, առողջ, հիվանդ



## ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ

Ակսել Բակունցը ծնվել է ………….. թ. ……………………..: Համագյուղացիների միջնորդությամբ ընդունվել է էջմիածնի ………………………. ճեմարան: Այնուհետև մեկ տարի աշխատել է …………….. գյուղում որպես ……………………..: Բակունցը մասնակցել է ……………………….. ճակատամարտին: Չարենցի նման նա էլ է մահացել ………………… թվականին:

***(1937, Գորիս, Լոր, Գևորգյան, 1899, ուսուցիչ, Սարդարապատ)***

*Սլաքով ցո՛ւյց տուր՝ ո՞րն է Ակսել Բակունցի իսկական անունազգանունը:*

Ակսել Բակունց

Ալեքսանդր Մյասնիկյան

Ալեքսանդր Թևոսյան

Ալեքսանդր Ծատուրյան

*Գտի՛ր ճիշտ շարունակությունը:*

***Բակունցի «Սպիտակ ձին»***

***ա/*** պատմվածք է

***բ/*** բանաստեղծություն է

***գ/*** հեքիաթ է

*Թվարկված հատկանիշներից որո՞նք են բնորոշում Սիմոնին, որո՞նք՝ Կոստանդ աղային: Գրի՛ր համապատասխան սյունակներում:*

չար, խեղճ, խորամանկ, միամիտ, աղքատ, տանջված, հարուստ, ինքնավստահ

| Սիմոն | Կոստանդ աղա |
|---|---|
| | |
| | |
| | |
| | |

*Գրի՛ր ձի բառի հետ կապված այլ բառեր:*

**ձի** →

*Լրացրո՛ւ Բակունցի պատմվածքների վերնագրերում բաց թողած բառերը:*

***ա/*** «______________ մանուշակ»

***բ/*** «Խոնարհ ________________ »

## ՆԱԻՐԻ ԶԱՐՅԱՆ



*Տեղադրի՛ր տրված բառերը անհրաժեշտ տեղերում:*

Նաիրի Զարյանը ծնվել է .................................. գյուղում: Մանկության տարիներին կորցրել է տատին, հորը, մորը: Մնացել է միայն ....................., որին էլ կորցրել է հետո: Շատերի նման ինքն էլ է ապրել .........................., որտեղ էլ սկսել է գրել: Գրել է հայրենիքին նվիրված շատ բանաստեղծություններ և «............... ........................» ողբերգությունը:

***(Արա Գեղեցիկ, Խառակոնիս, որբանոց, քույր)***

*Ո՞րն էր Նաիրի Զարյանի իսկական անուն-ազգանունը: Ընտրիր:*

***ա/*** Անուշավան Բաղդասարյան

***բ/*** Հայաստան Եղիազարյան

***գ/*** Նորայր Եդիգարյան

***Տեղադրի՛ր տրված քառատողում բաց թողած բառերը:***

Այս գիշեր տեսա մի անուշ ..........................,
Ես հայրենի տունն էի ...................................,
Մանկության ...................... էր բացվել վրաս,
Եվ ......................................... կային իմ հոգու:

***(նորոգել, արշալույսներ, երազ, երկինք)***

***Տարվա ո՞ր եղանակն է «Հայրենի տուն» բանաստեղծության մեջ: Գրի՛ր այն տողերը, որոնք օգնում են գուշակել:***

___________________________________________________________________

___________________________________________________________________

***Ի՞նչ բառով է բնորոշում Նաիրի Զարյանը հայոց լեզվին: Գտի՛ր դասագրքից:***

Արի, եղբայր, փառաբանենք մեր .................................... հայոց լեզուն:

***Բառերը ճիշտ տեղադրելով՝ կստանաս բանաստեղծական տողը:***

Մեր ............................ ջուր, մեր ......................... թուր, մեր .................................. լար հայոց լեզուն:

***(հոգի, ձեռք, սիրտ)***



# ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ

***Տեղադրի՛ր բաց թողած բառերը.***

Գուրգեն Մահարին (_______________) ծնվել է _________ քաղաքում _________ թ.:
(իսկական ազգանունը)

Գաղթի ճանապարհին նա կորցրել է _________________ և ուրիշ փախստականների հետ հասել _______________ Հայաստան: Այստեղ նա հայտնվել է որբանոցում, որտեղ էլ ծանոթացել է բանաստեղծ _______________ հետ: 1936 թ-ին նա աքսորվել է Սիբիր: Աքսորից ազատվել է 1953 թ. և վերադարձել _______________:

Գ. Մահարին մահացել է _______ թ.:

***(Երևան, Եղիշե Չարենց, 1969, Վան, հարազատներին, 1903, Արևելյան)***

***Ի՞նչը կամ ո՞վ էր բանաստեղծի առաջին սերը.***

***ա.*** խաժ աչքերով մի աղջիկ ☐
***բ.*** Չալոն ☐

***Լրացրու՛ բաց թողած բառերը.***

Չալոն իմ ………. էր, չալ-չալ աչքուն էր,
Չալոն ………….. էր, պայծա՜ռ Չալո.
Ընկնում էր ոտիս, աչքը ………….. էր,
Բայց բանը վերջացավ ……………..:

***(չարով, չքնաղ, շունն, փակում)***

***Գտի՛ր ընդհանուր հատկանիշը.***



Չալոն                                             աչքը փակում էր:

### *Տողերը համարակալի՛ր ճիշտ հերթականությամբ.*

... Ոսկեգույն էին նրա մազերը
... Խաժ աչքով աշխույժ մի աղջիկ,
... Ու բուրում էին դարչին:
… Մի աղջիկ եղավ իմ երկրորդ սերը.

### *Ո՞ր միտքը չի վերաբերում Մահարու տատին.*

***ա.*** Նա մի փոքրիկ փայլուն օղ էր իմ մանկական հիշողություններում մեջ: ☐
***բ***. Ջիու վրա մորեղբայրս կապել էր մի սև յափնջի: ☐
**գ.** Հասակակից կանայք նրան Օղիկ էին ասում: ☐

### *Շարունակի՛ր նախադասությունները.*

1. Մայրս ինձ համար Անուշ էր, …
2. Տատս օրվա մեջ մի քանի անգամ խոստանում էր ինձ …
3. Տատս ինձ սովորեցրել էր …

### *Ո՞ր հատվածից է ընտրված նախադասությունը.*

*Տատս բռնեց իմ ձեռքից և ասաց.*
*- Իմ Գուրիսին տանեմ, աշխարհ տիսնա:*

***ա.***«Իմ տատը» ☐
***բ.*** «Հասարակական աշխատանք» ☐
**գ.** «Հրաժեշտ Վանին» ☐

*Սլաքների օգնությամբ ստացի՛ր ճիշտ վերնագրեր.*

| | |
|---|---|
| Այրվող | և առաջին սիրո մասին |
| Ծաղկած | այգեստաններ |
| Բալլադ Չալոյի | փշալարեր |

*Լրացրու՛ աղյուսակը.*

| | |
|---|---|
| Որտե՞ղ է անցել Մահարու մանկությունը: | |
| Ինչու՞ էին վանեցիները հեռանում քաղաքից: | |
| Ճանապարհվելիս ինչե՞ր էր վերցրել իր հետ Գուրիսը: | |

*Նշվածներից ո՞րը Գ. Մահարու ստեղծագործությունը չէ.*

**ա.** «Մանկություն» ☐ **գ.** «Ծաղկած փշալարեր» ☐
**բ.** «Ավելորդը» ☐ **դ.** «Պատանեկություն» ☐



## ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

*Լրացրու՛ բաց թողած բառերը.*

Հովհաննես Շիրազը (____________________) ծնվել է ____________ քաղաքում ________ թ.:
իսկական ազգանունը

Դեռ հինգ տարին չբոլորած՝ զրկվել է ___________: Որբ ու անօթևան երեխաների հետ թափառել է փողոցից փողոց, ջուր ծախել, ապա հայտնվել է _________________: Շուտով փախել է այնտեղից և մի օր էլ շուկայում պատահաբար գտել __________:

Նրա բանաստեղծությունների առաջին ժողովածուն՝ _______________________, լույս է տեսել __________ թ.: Հովհ. Շիրազը մահացել է ________ թ.:

***(որբանոցում, 1935, «Գարնանամուտը», 1984, Գյումրի, հորից, 1915, մորը)***

*Կազմի՛ր նախադասություններ ճնճղուկ և ծիծեռնակ բառերով:*

___________________________________________________________

___________________________________________________________

*Ո՞ր միտքը ճիշտ չէ: Նշի՛ր.*

Բանաստեղծն իրեն երջանիկ կզգա, երբ ☐ ☐ ☐

***ա/*** գարունները գան ու գնան:

***բ/*** երջանիկ լինեն ողջ մարդիկ:

***գ/*** գարունները գան ու չգնան:

***Ի՞նչ է նշանակում հողմ բառը.***

**ա.** անձրև ☐ **գ.** մոլորակ ☐
**բ.** ուժեղ քամի ☐ **դ.** կայծակ ☐

***Ո՞րը հոմանիշ չէ վայրագ բառին.***

**ա.** կատաղի ☐ **գ.** դաժան ☐
**բ.** խաղաղ ☐ **դ.** անզուսպ ☐

***Կազմի՛ր նախադասություն հողմ և վայրագ բառերով.***

____________________________________________

____________________________________________

***Լրացրու՛ բաց թողած բառերը.***

Մենք խաղաղ էինք մեր ………… պես,
Դուք ………… պես խուժեցիք վայրագ:

***Գտի՛ր բաց թողած բառը.***

Մենք ծեր դեմ ելանք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես ……….…. վայրագ:

**(գոռացիք, ոռնացիք, մռնչացիք)**

***Ո՞ր բառերն են իրար հականիշ: Ցու՛յց տուր սլաքով.***

| | |
|---|---|
| մայր | մոտ |
| իջնել | ներքև |
| վերև | հայր |
| հեռու | բարձրանալ |

***Մայր բառին ավելացրու՛ հատկանիշներ.***



*Ո՞ր տարբերակն է ճիշտ.*

***ա.*** Ասես փետուր է թափվում
Մորս վրա վերևից,
Ձյուն է իջնում, կուտակվում
Հրեշտակի թևերից:

***բ.*** Ձյուն է իջնում, կուտակվում
Մորս վրա վերևից,
Ասես փետուր է թափվում
Հրեշտակի թևերից:

*ա. Կազմի՛ր բառեր.*

*բ. Այս բառերից որո՞նք են գործածվել «Հայ ժողովրդի երգը» բանաստեղծության մեջ.*




______ ☐
______ ☐
______ ☐
______ ☐
______ ☐
______ ☐

*Ո՞րն է ահ բառի հոմանիշը.*

***ա.*** մահ ☐
***բ.*** վախ ☐
***գ.*** ցավ ☐

*«Հայ ժողովրդի երգը» բանաստեղծությունից դուրս գրի՛ր կրկնությունները.*

______________________________
______________________________
______________________________

***Ո՞րը Շիրազի բանաստեղծություններից չէ.***

«Թագադրում» ☐
«Էլի գարուն կգա» ☐
«Հայ ժողովրդի երգը» ☐
«Էքսպրոմտ» ☐

***Շիրազի ո՞ր բանաստեղծությունից է հետևյալ երկտողը.***

*Աչքերիս մեջ □արնան օրեր,*
*Ճամփես դեպի աստղերն անմեռ□*

***ա.*** «Գարնանամուտ» ☐
***բ.*** «Թագադրում» ☐
**գ.** «Հայ ժողովրդի երգը» ☐



## ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

***Տեղադրի՛ր բաց թողած բառերը:***

Համո Սահյանը ծնվել է ……………… գյուղում: Հիմնական կրթությունը ստացել է ………………..: Մասնակցել է ………………….. պատերազմին: Այնտեղ էլ գրել է «Նաիրյան դալար …………….» բանաստեղծությունը:

Բնության և մարդու մասին նրա բանաստեղծությունները սիրելի են ամենքին:

***/բարդի, Լոր, Հայրենական, Բաքու/***

***Լրացրո՛ւ բաց թողած բառերը:***

…………………..... ամպի ծվեններ կային,

Կապույտ …………….կային անտառում.

Օրոր էր ասում ……...……. անտառին,

Բայց դեռ անտառի ……….. չէր տանում:

***/մշուշներ, անտառում, աշուն, քունը/***

***Տեղադրի՛ր ճիշտ ձևով:***

***ա/*** Որսկանը հորթուկի կորած հետքերն էր …………........………:

***/որոնել/***

***բ/*** Թեղին անտարբեր ………………………… կաղնու ....................:

***/ականջ դնել/ /հառաչանք/***

***գ/*** Օրոր էր ասում աշունն ………...........................................…………..:

***Պատկերավորման ի՞նչ միջոց է կիրառված տրված քառատողում:***

*Եղյամն էր սունկի □լուխն արծաթում,*
*Մրսում էր կարծես վայրի նշենին,*
*Հան□ստանում էր հողմը բացատում*
*Ականջն ամպրոպի ազդանշանին:*

***ա/*** համեմատություն

***բ/*** փոխաբերություն

***գ/*** մակդիր

***Պատասխանի՛ր «Անտառում» բանաստեղծությունից հան-ված հարցերին:***

***ա/*** Ի՞նչ էր անում եղնիկի հորթը:

______________________________________________

______________________________________________

______________________________________________

**բ/** Ի՞նչ էր անում կանաչ եղնին:

______________________________________________

______________________________________________

**գ/** Ինչե՞ր կային անտառում:

______________________________________________

______________________________________________

***Տեղադրի՛ր բաց թողած բառերը:***

Կախվել է ………………….. անդունդի վրա

Եվ ………………………. այդպես կախված է մնում,

Ջրերի մեջ են ………………………նրա,

Իսկ գլխին հոգնած ……………………. են քնում:

***/ամպեր, դարեր, ժայռ, ոտքեր/***

***Պատասխանի՛ր հարցերին:***

| | |
|---|---|
| …………..………. երկինք | /ինչպիսի՞/ |
| ………….............. քամի | /ինչպիսի՞/ |
| ամպերն ………………….. | /ի՞նչ են անում/ |
| դիմանալ …………………. | /ինչի՞ն/ |

***Տառերը ճիշտ դասավորելով՝ ստացի՛ր:***

**ա/** …............................ – միջնադարյան բանաստեղծ. տեսակ

***/ա ն հ յ ե ր/***

**բ/** …………..........………… - շինականի աշխատանքային երգ

***/լ հ վ ո ր ո ե/***

***Շարունակի՛ր նախադասությունը, որ ստանաս***

**ա/** հայրենիքին վերաբերող նախադասություն

**բ/** մորը վերաբերող նախադասություն

Ախր ես ինչպես…

***Նմուշ՝*** Ախր ես ինչպես լքեմ իմ հայրենիքը:

*Գրի՛ր հող բառի հետ կապված այլ բառեր:*

**Նմուշ՝ հող – պարարտանյութ,**

____________ - ___________________

____________ - ___________________

*Պատասխանի՛ր հարցերին:*

***ա/*** Ո՞րն է եղել քո մանկության ամենահիշվող խաղալիքը:

____________________________________________________________

***բ/*** Որտե՞ղ ես քեզ ավելի լավ զգում:

____________________________________________________________

*Կազմի՛ր հարց* ախր *և* ինչպես *բառերով:*

**Նմուշ՝** Ախր ի՞նչ ասեմ, որ ճիշտ լինի:

Ախր_________________________________________________________________

____________________________________________________________

Ինչպես________________________________________________________

______________________________________________________________

## ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ



*Նշի՛ր՝ որն է Պարույր Սևակի իսկական ազգանունը:*

ա/ Ղազարյան

բ/ Գևորգյան

գ/ Պետրոսյան

*Լրացրո՛ւ Սևակի ժողովածուների վերնագրերի բաց թողած բառերը:*

«...................... ափի մեջ», «եղիցի ......................»

*Նշի՛ր՝ ում մասին է Սևակի «Վարք մեծաց» բանաստեղծությունը:*

ա/ զինվորների

բ/ բանաստեղծների

գ/ շինարարների

*Նշի՛ր՝պատկերավորման ի՞նչ միջոց է կիրառված:*

*Անվտան□՝ ինչպես հրդեհն արևի,*
*Անվնաս՝ ինչպես օ□տակար լորտուն,*
*Վախ են ներշնչում պետություններին*
*Մինչև իսկ իրենց կամքի հակառակ:*

***ա/*** փոխաբերություն

***բ/*** համեմատություն

***գ/*** չափազանցություն

*Քո կարծիքով ո՞ր բացատրությունն է ճիշտ* վարք մեծաց *արտահայտության համար, ընտրի՛ր:*

ա/ մեծի պես վարվելաձև
բ/ մեծերի կյանքի նկարագրություն
գ/ մեծավարի կարգ ու կանոնի պահպանություն

*Ընդգծի՛ր բառերի բացատրության ճիշտ տարբերակները:*

***ա)*** Սերել → սիրել / ծնվել / նկարել

***բ)*** Քարայր → քարանձավ / քարի պես տղամարդ / քարից շինված

*Կազմի՛ր բառակապակցություններ տակառ, ծերուկ, հրդեհ բառերով:*

տակառ ____________________
ծերուկ ____________________
հրդեհ ____________________

*Տեղադրի՛ր փակագծերում տրված բառերը՝ ենթարկելով փոփոխությունների:*

Սերում են նրանք և այն ............................... **/ծերուկ/**
Որ նախընտրում էր քնել ..............................., **/տակառ/**
Սերում են նրանք և այն ..............................., **/պատանի/**
Որ սիրահարվեց իր իսկ ...............................: **/պատկեր/**

*Նարգիս և Դիոգենես անունները տեղադրիր համապատասխան տեղերում:*

***ա/*** Ըստ ավանդության՝ հույն փիլիսոփա ......................................... ապրել է տակառում՝ հրաժարվելով հարմարավետ կյանքից:

***բ/*** Ըստ հունական առասպելի՝ .................................... կյանքում ոչ ոքի չի սիրել: Մի անգամ ջրի մեջ տեսնում է իր արտացոլումը և սիրահարվում ինքն իրեն:

*Նշի՛ր այն տարբերակը, որն ըստ քեզ՝ նշանակում է եղիցի լույս:*

***ա/*** թող մարի լույսը

***բ/*** թող լինի լույս

***գ/*** թող փոխվի լույսը

*Գրի՛ր տրված բառերի հոմանիշները:*

մաքուր - ____________________

անկեղծ - ____________________

ճչալ - ____________________

***Տեղադրի՛ր տրված բառերը համապատասխան տեղերում:***

Ինչքան էլ ծանր է մանուկ ..............................,

Մանուկ ................................ ծանր է ավելի:

***/ պահել, թաղել/***



## ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

***Լրացրու՛ բաց թողած բառերը.***

Հրանտ Մաթևոսյանը ծնվել է Լոռվա ____________ գյուղում _________թ.: Բարձրագույն կրթությունը ստացել է ________________ մանկավարժական ինստիտուտում, հետո սովորել է _____________ :

Նա գրել է __________________, վիպակներ: Նրա «Մենք ենք, մեր սարերը», «Աշնան արև», «Տերը» վիպակների հիման վրա նկարահանվել են կինոնկարներ:

Հ. Մաթևոսյանը մահացել է ________թ.:

***(2003, Մոսկվայում, Ահնիձոր, պատմվածքներ, Երևանի, 1936)***

***Ո՞րը պատմվածք չէ.***

ա. «Սպիտակ ձին» ☐

բ. «Կանաչ դաշտը» ☐

գ. «Մասրենի» ☐

դ. «Ավելորդը» ☐

*Կենդանուն սլաքով համապատասխանեցրու՛ իր ձագի հետ.*

| | |
|---|---|
| եղջերու | քուռակ |
| ձի | գառ |
| այծ | ուլ |
| ոչխար | եղնիկ |

______________________

______________________

______________________

______________________

______________________

______________________



***ա. Նկարագրի՛ր քուռակին*** ***բ. Նկարի՛ր նրա***

**(դուրս գրիր բառեր ու բառակապակցություններ).**

______________________ ______________________

______________________ ______________________

*Շարունակի՛ր նախադասությունները.*

1. Քուռակը հիմարիկ էր, բայց ______________________:
2. Ձին այս հովտի բույրերն ավելի լավ գիտեր քանի որ______________________:

*Կարդա՛ պատմվածքի առաջին հատվածը (էջ 163-165) և լրացրու՛.*

| *Ի՞նչ տեսա* | *Ի՞նչ ձայներ լսեցի* |
|---|---|
| | |
| ***Ի՞նչ է լինելու*** | ***Նոր վերնագիր*** |
| | |

### *Լրացրու՛ բաց թողած բառերը.*

**ա.** ______________ հովտում կանգնած՝ նայում ու լռությունն ունկնդրում էին __________________ժայռը, _____________ կաղնին, _____________ պառավ ձին և _______________ թուփը:

***(կարմիր, փարթամ, կանաչ, մասրենու, մոխրագույն)***

**բ.** Եվ _________ հասկացավ, որ _______ իր քուռակին պաշտպանելու է մինչև վերջ, և ______ հասկացավ, որ _________ չի հեռանալու:

***(ձին, գայլը)***

### *Ո՞ր իմաստով է գործածվել հոտ բառը.*

Ձին արածում էր և *ոչխարի թաց բրդի հոտ էր ք□ում:*

**ա.** բույր

**բ.** ոչխարների խումբ

### *Ո՞րը մայր ձիու մասին չէ.*

**ա.** Պարանը նրան չէր թողնում թռչել իր զավակի մոտ: ▢

**բ.** Ինքն իր երեք ձագերի մոտ կդառնար քաղցած ու դատարկ: ▢

**գ.** Նա շատ արագընթաց զամբիկ էր: ▢

**դ.** Նա գիտեր, որ մինչև շների հասնելը ինքը պարտավոր է համբերել: ▢

### *Նշի՛ր ճիշտ պատասխանը.*

Գայլը հարձակվեց ձիու և նրա քուռակի վրա, որովհետև
- դա նրան զվարճացնում էր:
- ինքն ու իր ձագերը սոված էին:

Ձին կատաղի կռվում էր գայլի դեմ, որովհետև
- պայքարում էր իր կյանքի համար:
- պաշտպանում էր իր ձագուկին:

Գայլը փախուստի դիմեց, որովհետև
- ձիուն օգնության հասան շները:
- հոգնեց, ուժասպառ եղավ:

### *Ինչու՞ սատկեց մայր ձին (դու՛րս գրիր նախադասությունը).*

*Մի՞թե մայր Ճին պարտվեց: Մեկնաբանի՛ր.*

*Ո՞վ էր պատմում պատմությունը.*

ա. ծեր հովիվը ☐

բ. փոքրիկ հովիվը ☐

## ՄՈՒՇԵՂ ԳԱԼՇՈՅԱՆ



*Նշի՛ր՝ որտեղ է գտնվում Սասունը:*

ա/ Արևմտյան Հայաստանում

բ/ Արևելյան Հայաստանում

գ/ Իրանում

*Ինչպե՞ս է կոչվում Գալշոյանի պատմվածքների ժողովածուն: Լրացրո՛ւ բաց թողած բառը:*

«....................................... սարի ամպերը»

*Ընդգծի՛ր՝ ո՞րն է քո կարծիքով Գալշոյանի պատմվածքի ճիշտ վերնագիրը:*

ա/ Մամփրե իշխանը

բ/ Մամփրե արքան

գ/ Մամփրե զինվորը

*Ալաքներով ցո՛ւյց տուր՝ ո՞վ ո՞ւմ էր սովորեցնում այբուբենը և ի՞նչ հերթականությամբ:*

Խաչը

տեր Հարությունը

թոռնուհի

Մամփրե

*Միասին գրված բառերն իրարից առանձնացրո՛ւ և յուրաքանչյուր բառը գրի՛ր մի ճառագայթի վրա:*

Հայոցտառերըկարմիրեներանզիթրծվելեմարդարարեգակով

*Համարակալի՛ր բանաստեղծությունը ճիշտ հերթականությամբ:*

1 Լծիր եզան

2 Այբ, բեն, գիմ

3 Ել, Յովակիմ,

4 Դա, եչ, զա:

*Նշի՛ր, որտե՞ղ էր գրում տեր Հարությունը տառերը:*

**ա/** ասեղնագործում էր կտավի վրա

**բ/** կավիճով էր գրում գետնին

**գ/** թանաքով էր գրում տետրում

*Նկարի՛ր քո սիրած տառերը: Քո կարծիքով, ո՞ր տառն ինչի՞ է նման:*

Տառերը համապատասխան ձևափոխության ենթարկելով՝ վերականգնի՛ր իմաստուն խոսքը:

***ուսում, եփել, հաց, մարդ, թև, տակ, դնել***

_______________________________________________

_______________________________________________

*Սլաքներով միացրո՛ւ ճիշտ կապերը:*

| | |
|---|---|
| տեր Հարություն | հարևան |
| Սարգիս | աղբյուր |
| մշեցի Խաչո | սուրբ |
| Աթարունար | վարժապետ |

*Թվարկված բառերից ընդգծի՛ր սարերը:*

Մարաթուկ, Տալվորիկ, Արարատ, Սասուն, Մուշ, Անդոկ

*Գրի՛ր՝ ի՞նչ բառեր են տպավորվել «Մամփրե արքան» պատմվածքից:*

_______________________________________________

_______________________________________________

*Ո՞ւմ նամակ գրեց Մամփրեն:*

_______________________________________________

*Գրի՛ր՝ ո՞վ և ե՞րբ է ստեղծել հայոց տառերը:*

*Պատասխանելով հարցերին՝ կարող ես առաջին տառերով կարդալ այն բառը, որով կոչում էր Մամփրեն հայոց տառերը:*

- Ո՞վ էր սովորեցնում Մամփրեին: ______________________________
- Մեհրեաղբյուրին թուրքերն ի՞նչ էին ասում: _______________________
- Ո՞վ է ռուսներից առաջինը տիեզերք թռել: ________________________
- Միերին ո՞ր կենդանու անունով էին կոչում: _______________________
- Ի՞նչ մասնագիտություն ուներ տեր Հարությունը: _________________
- Ո՞րն է *այո* բառի հականիշը: __________________________________
- Այբուբենի ***ր*** տառն ինչպե՞ս էր արտասանվում: ___________________



## ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ

*Լրացրո՛ւ բաց թողած բառերը:*

.......................... Սարոյանը ....................... դարի ամերիկյան գրականության ականավոր ներկայացուցիչներից է: Նա ծնվել է ................................ .............................գաղթած.......................... և ................................Սարոյանների ընտանիքում:

Առաջին անգամ ....................... եղել է Երևանում: Սարոյանը վախճանվեց .......................քաղաքում ............. թվականի մայիսի 18-ին: Նրա կտակի համաձայն աճյունի մի մասը թաղվել է ...................................:

***(Ֆրեզնո, Թագուհի, Վիլյամ, Կալիֆոռնիա, 20, 1981, Արմենակ, Երևան, 1935, Բիթլիս)***

*Նշի՛ր՝ ի՞նչ ժանրի ստեղծագործություն է «Իմ սիրտը լեռներում է» ստեղծագործությունը:*

**ա/** վիպակ **բ/** թատերգություն **գ/** հեքիաթ

*Նշի՛ր՝ քանի՞ տարեկան էր Ջոնին:*

**ա/** 9 **բ/** 19 **գ/** 29

*Պատասխանի՛ր հարցերին:*

**ա/** Ո՞ւմ սիրտն էր լեռներում:

______________________________

**բ/** Ո՞ր լեռներում էր նրա սիրտը:

______________________________

*Ըստ Մեք-Գրեգորի՝ երգերը կարևորը չեն, կարևորը հայն է: Թվարկի՛ր, թե ինչերն են քեզ համար կարևոր:*

______________________________

______________________________

*Փոքրիկ Ջոնին հնարամտությամբ հաց ու պանիր ձեռք բերեց: Հիշի՛ր քո կյանքից դեպքեր, երբ կարողացել ես ուզածդ բանին հասնել: Գրի՛ր սյունակներում:*

| հ. | Ի՞նչ ես ուզել | Ումի՞ց ես ուզել | Ի՞նչ հնարներով ես հասել ուզածիդ |
|---|---|---|---|
| 1. | | | |
| 2. | | | |
| 3. | | | |
| 4. | | | |

*Դու կարո՞ղ էիր անծանոթ մարդուն տեղ տալ ձեր տանը, ինչպես եղավ Մեք-Գրեգորի դեպքում: Սյունակներում հիմնավորի՛ր:*

| ԱՅՈ - ո՞ր դեպքում | ՈՉ - ո՞ր դեպքում |
|---|---|
| | |
| | |
| | |

*Ի՞նչ էր նվագում Մեք -Գրեգորը:*

*«Իմ սիրտը լեռներում է» ստեղծագործության վերջում ի՞նչ գրությամբ ցուցանակ էր փակցված տան վրա:*

*Ո՞ւր տարան Մեք -Գրեգորին:*

*Պատասխանի՛ր հարցերին:*

ա/ Ի՞նչը քեզ դուր եկավ այս ստեղծագործության մեջ:

բ/ Ի՞նչը քեզ տխրեցրեց:

գ/ Ի՞նչը չհամոզեց:

դ/ Ի՞նչը զարմացրեց:

*Թվարկիր՝ դու և Ջոնին ինչո՞վ եք իրար նման և ինչո՞վ եք տարբերվում:*

| նմանություններ | տարբերություններ |
|---|---|
| | |



## ՋԵԿ ԼՈՆԴՈՆ

*Լրացրու՛ բաց թողած բառերը.*

Ջեկ Լոնդոնը ծնվել է ԱՄՆ-ի ____________________ քաղաքում ________թ.: Մեծացել է աղքատ ընտանիքում և փոքր տարիքից ստիպված է եղել աշխատել:

Սովորել է ____________________ համալսարանում: Տպագրվել սկսել է _____ տարեկանից: Գրել է վեպեր, վիպակներ, պատմվածքներ: Նա շատ է ճանապարհորդել. եղել է _______________, _______________:

Ջ. Լոնդոնը մահացել է ________թ.:

***(Անգլիայում, 17, Սան-Ֆրանցիսկո, 1916, Կալիֆոռնիայի, 1876, Կանադայում)***

***Խմբավորի՛ր բույսերն (թուփ, ծառ, ծաղիկ) ու կենդանիները (միջատ).***

(լիանա, եղջերու, գետնամորի, թիթեռ, շուշան, եղնիկ, ձի, հովտաշուշան, ճանճ, մեղու)

| ***բույսեր*** | ***կենդանիներ*** |
| --- | --- |
| ________________ | ________________ |
| ________________ | ________________ |
| ________________ | ________________ |
| ________________ | ________________ |
| ________________ | ________________ |

***Նշի՛ր այն ծաղիկները, որոնք նաև հատուկ անուններ են.***

***ա.*** լիանա ☐
***բ.*** հովտաշուշան ☐
***գ.*** շուշան ☐

***Ի՞նչը խախտեց կիրճի անդորրը.***

***ա.*** մարդու հայտնվելը ☐
***բ.*** առվակի խոխոջը ☐

***Ինչու՞ էր նա եկել կիրճ.***

***ա.*** բնության հրաշքը վայելելու ☐
***բ.*** ձուկ որսալու ☐
***գ.*** ոսկի որոնելու ☐
***դ.*** ավազ լվանալու ☐

***Նկարագրի՛ր ոսկի որոնողին.***

________________________________________________
________________________________________________
________________________________________________
________________________________________________

***Ի՞նչ անհրաժեշտ չէր նրան.***

ա. սղոց ☐ գ. ոսկի լվանալու թաս ☐

բ. բահ ☐ դ. քլունգ ☐

***Լրացրու՛ բաց թողած բառերը.***

***ա.*** ____________ դանդաղ առաջ շարժվելով՝ մարդը ____________, փչացնում էր ____________ հարթությունը:

***(գեղեցիկ, խխունջի պես, քանդում)***

***բ.*** Նրա հայացքը սկսեց ____________ որոնել ու դեմ առավ միայն ____________ կտորների, որոնք ____________ պահին այնքան ____________ էին:

***(աղետի, զենք, անօգուտ, ոսկի)***

***Ինչու՞ է պատմվածքը վերնագրված «Ոսկե կիրճը»: Մեկնաբանի՛ր.***

______________________________________________

______________________________________________

______________________________________________

***Ո՞ր հատկանիշներն են բնորոշ ոսկի որոնողին.***

***ա.*** ճարպիկ ☐ ***դ.*** համառ ☐

***բ.*** խորամանկ ☐ ***ե.*** ծույլ ☐

***գ.*** աշխատասեր ☐ ***զ.*** ագահ ☐

***Գրի՛ր տրված պատկերների սկզբնատառերը և կիմանաս, թե ինչն է ոսկի որոնողի և անծանոթի հետաքրքրության առարկան.***



ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

*Կազմողներ*՝ Գասպարյան Դավիթ
Մկրտչյան Գայանե
Ալեքսանյան Արմինե

*Համակարգչային աշխատանքները*՝

Աշխեն Այվազյանի

Ծավալը՝ 2 մամուլ, Ֆորմատը՝ 70X100 $^{1}/_{16}$,
Տպաքանակը՝ : Տպագրությունը՝ օֆսեթ:
«Կրթության ազգային ինստիտուտ» Երևան, Տիգրան Մեծի 67,
Հեռ. 574910